

ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ

(Ծննդյան 80-ամյակի առիվ)

Լրացավ Սիրարփի Տեր-Ներսեսյանի ծննդյան 80-ամյակը։ 80 տարի, որից։ առնվազն հիսունն իմաստավորված է գիտությանը անմնացորդ նվիրումով, ստեղծագործական անդադար պրպտումներով, անխոնջ գործունեությամբ։ Տեր-Ներսեսյանի կյանքում ամեն ինչ ենթարկվել է մեկ գերագույն, համապարփակ նպատակի՝ ստեղծագործության։ Զուգակցելով իր անձի մեջ իսկական մեծ գիտնականին հատուկ գծերը՝ աշխատասիրություն, համեստություն, անկողմնակալություն, սկզբունքայնություն, բժախնդրություն, Ս. Տեր-Ներսեսյանը միշտ ծառայել է ճշմարիտ գիտության շահերին։ Եվ այսօր, հիրավի, մենք այդ հսկայական աշխատանքի արդյունքի՝ 100-ից ավելի տպագիր մեծարժեք ուսումնասիրությունների ակնածալի վկաներն ենք։ Անգնահատելի է այդ ուսումնասիրությունների դերը հայ միջնադարյան արվեստի պատմության լուսաբանության, եվրոպական լայն հասարակությանն այդ արվեստը ներկայացնելու գործում։ Պրոֆ. Տեր-Ներսեսյանի շնորհիվ եվրոպացի շատ ուսումնասիրողների հայացքներն ուղղվել են դեպի Հայաստան, նրա պատմությունն ու արվեստը։

Ս. Տեր-Ներսեսյանը ծնվել է 1896 թ. սեպտեմբերի 4-ին Կոստանդնուպոլսում, նշանավոր գիտնական և եկեղեցական գործիչ Մաղաքիա Օրմանյանի քրոջ ընտանիքում։ Միջավայրը միանգամայն բարենպաստ էր հայ մշակույթի նկատմամբ նրա մեջ հետաքրքրություն առաջացնելու համար։

Ավելի ուշ տեղափոխվելով Փարիզ, Ս. Տեր-Ներսեսյանը հաճախում է Սորբոնի համալսարանի պատմության և արվեստի պատմության ֆակուլտետի դասընթացները, որը և ավարտում է՝ ստանալով բանասիրության դոկտորի աստիճան։ Մոտիկ ծանոթությունը և պարավունքները հայտնի բյուզանդագետ պրոֆեսոր Գաբրիել Միլեի հետ վերջնականապես որոշեցին Ս. Տեր-Ներսեսյանի կյանքի ուղին, ամրապնդեցին բյուզանդական և այնուհետև հայկական արվեստներով զբաղվելու ձգտումը և մեծ դեր խաղացին նրա հետագա գիտական գործունեության մեջ։ Ս. Տեր-Ներսեսյանի գիտական գործունեության սկիզբը համարվում է 1924 թ.։ Մինչև ժամանակ սկսվում է և նրա մանկավարժական աշխատանքը նախ Փարիզի բարձրագույն դասընթացների պրակտիկ դպրոցում, ապա Վելելիի քոլեջում (Ամերիկա), ուր նա դասավանդում է արվեստի պատմություն։ 1946 թ. Ս. Տեր-Ներսեսյանը բյուզանդական արվեստի պրոֆեսորի կոչում է ստանում Դումբարտոն Օբսուր (ԱՄՆ) և դառնում Հարվարդի համալսարանի Արվեստների և գիտության ֆակուլտետի անդամ, ուր և 1963 թ. արժանանում է վաստակավոր պրոֆեսորի պատվավոր կոչմանը։ Նրա գիտական գործունեության սկիզբը նշանավորվում է բյուզանդագիտական և հայագիտական հոդվածներով, որոնք աչքի են ընկնում իրենց մանրակրկիտ, բազմակողմանի վերլուծումներով և, մանավանդ, ընդհանուր բնույթի մի շարք պատմագեղարվեստական խնդիրների արծարծմամբ։ Այդ հոդվածներից են՝ «Նիկիֆոր Փոկասի և բյուզանդական դյուցազներգության նկարագրողությունները»¹, «Փարիզի հուն. 74 ձեռագրի մի նոր պատկերական արձագանք և Անաստաս Քրիսմոլոփի ձեռագրերը»², «Հայկական նկարագրող սաղմոսարան»³ (Միլեի հեղինակակցությամբ)։

¹ „L'Illustrations de Nicéphore Phocas et de l'Epopée Byzantine. Repertoire méthodique“. Melanges offerts a G. Schlumberger, Paris, 1924.

² „Une nouvelle réplique slavonne du Paris. Gr. 74 et les manuscrits d'Anastas Crimovici“. Melanges Nicolas Iorga, Paris, 1933.

³ „Le Psautier arménien illustré (en collaboration avec G. Millet)“, „Revue des études arméniennes“, 9 (1929).

«Էջմիածնի ավետարանի սկզբնաթերթերի մանրանկարները»⁴ և այլն: Աշակերտելով բյուզանդագիտության հին պատկերագրական դպրոցի կարկառուն ներկայացուցիչներից մեկին՝ Միլենին, Ս. Տեր-Ներսեսյանը յուրացրեց և ստեղծագործաբար լրացրեց ու զարգացրեց նրա մեթոդը: Միանգամայն իրավացի էր Ս. Տեր-Ներսեսյանը, երբ 1933 թ. ձեռնարկեց Էջմիածնի ավետարանի ուսումնասիրությանը: Վերջինիս մանրանկարների՝ հայ արվեստին պատկանելու խնդրի ապացուցումը բոլորովին էլ ինքնանպատակ չէր: Դա մի ուղի էր՝ լույս սփռելու հայ արվեստի զարգացման սկզբնական շրջանի վրա, վեր հանելու նրա ազգային առանձնահատկությունները, սահմանազատելու հայ և սիրիացի վարպետների գործերը, որոնք այնքան շփման կետեր ունեն, մանավանդ քրիստոնեության հաստատման վաղ շրջանում: Այս խնդրի լուծումը հմուտ գիտնականի մոտ հաջողությամբ պատկվեց հիմնականում սիրիական և հայկական արվեստների ոճական տարրերի խիստ դիֆերենցիացիայի, նրանց ձևի և բովանդակության համատեղ վերլուծման շնորհիվ: Համեմատական մեթոդի հիմնադիր կիրառումով Ս. Տեր-Ներսեսյանը բացահայտում է հայկական, սիրիական մանրանկարչության տարբերություններն ու ընդհանրությունները և սրանով իսկ լուծում նրանց ազգային առանձնահատկությունների բարդ խնդիրը: Նրա հոգվածում վերջնականապես որոշվում են Էջմիածնի ավետարանի սկզբնաթերթերի մանրանկարների հայկական պատկանելության և թվագրման (X դար) հարցերը:

Ս. Տեր-Ներսեսյանի առաջին խոշոր աշխատությունը բյուզանդական միջնադարի քննազավտից է: Դա «Բարեղամի և Հովասափի վեպի նկարազարդումներին»⁵ նվիրված ուսումնասիրությունն է, որը լույս տեսավ 1937 թ. և իսկույն ևեթ արժանացավ ֆրանսիական գրականության և պատմության ակադեմիայի Ֆուլդի մրցանակին: Հարցադրմամբ բարդ ու բազմապլան այս աշխատությունը երիտասարդ գիտնականի առաջին մեծ հաջողությունն էր: Այստեղ արդեն, Շ. Դիլի բնորոշմամբ, հստակորեն հանդես են գալիս նրա «սուղի էրուդիցիան և ճշգրիտ գիտական մեթոդը, ինչպես նաև խելքն ու նուրբ դիտողականությունը»⁶: Բյուզանդական մանրանկարչության մեջ Ս. Տեր-Ներսեսյանը տեսնում է հելլենիստական ավանդույթների լայն տարածում, խնդիր, որը հետագայում դրվեց ու խորապես զարգացվեց պրոֆ. Վ. Լազարևի կողմից նրա «Բյուզանդական արվեստի պատմություն» աշխատության⁷ մեջ:

Բայց իհարկե, Սիրարփի Տեր-Ներսեսյանի ուշադրության կենտրոնում միշտ էլ եղել է հայ արվեստը իր պատմական, գեղագիտական բազմապիսի պրոբլեմներով: Այսպես, հայ մանրանկարչության XII—XIV դդ. ձեռագրերի հետ կապված խնդիրները իրենց խոր լուսաբանումը գտան նրա՝ Վենետիկի Մխիթարյանների գրադարանում պահվող XII—XIV դդ. Մայր Հայաստանի և Կիլիկիայի ձեռագրերին նվիրված աշխատությունում⁸, որը լույս տեսավ 1937 թ.: Իր բովանդակության և ուսումնասիրության մեթոդով այս գիրքը հայ միջնադարյան արվեստով զբաղվողների համար ունի ծրագրային նշանակություն: Այստեղ գիտնականը իր ուշադրությունը սևեռում է մանրանկարների բնույթի հստակ բնորոշման վրա, կապելով այն առանձին աշխարհագրական շրջանների և դարաշրջանների հետ: Նա միաժամանակ առաջ է քաշում տարբեր արվեստների կապերի և փոխազդեցությունների հարցը, որոշում հայ մանրանկարչության տեղը Մերձավոր Արևելքի արվեստի պատմության մեջ, բացահայտում նրա յուրահատկությունը, կրած ու թողած ազդեցությունները: Ս. Տեր-Ներսեսյանի մեթոդի մյուս կարևորագույն հատկանիշը փաստագրությունն է, մեծագույն հարգանքով է նա մոտենում փաստերին: Ըստ ամենայնի նշանակալից է այն եզրակացությունը, որին հանգում է Տեր-Ներսեսյանը XII—XIV դդ. ձեռագրերին նվիրված իր գրքում: Նյութի կոնկրետ ուսումնասիրումից հետո նա գրում է.

⁴ «Էջմիածնի ավետարանի սկզբի թերթերի մանրանկարների թվականը», «Հայ արվեստը միջնադարում», Նրեան, 1975:


⁵ «L'illustration du Roman de Barlaam et Joasaph», 2 vols., Paris, 1937.

⁶ «L'illustration du Poman de Barlaam...». Préface.

⁷ В. Лазарев, Искусство Византии, М., 1947.

⁸ «Manuscrits arméniens illustres de 12^e, 13^e et 14^e siècles de la Bibliothèque des Pères Mekhitaristes de Venise», 2 vols., Paris, 1957.

«Հայ գեղանկարչության մեջ մենք տեսնում ենք շատ նշմարելի երկվություն, որը տարբեր ներդրումների արդյունք է. այս երկվությունը բնորոշ է և ժողովրդին... հայերը, որոնք Եվրոպայից գաղթել են Փոքր Ասիա, մի կենդանի արևմտյան խումբ են կազմում Արևելքում: Նրանք իրենց ծագման և կազմավորման պատմական, աշխարհագրական հանգամանքների բերումով իրենց մեջ համադրում են այդ երկու աշխարհների բնորոշ գծերը: Ինչպես լեզուն, այնպես էլ արվեստը կրում են երկվության կնիք: Հայկական արվեստը, որ ավելի արևելյան է, քան բյուզանդականը, ավելի մոտ է արևմտյան մտածողությանը, քան իրանական կամ մուսուլմանական արվեստները: Հանգամանքների բերումով, կամ ըստ աշխարհագրական շրջանների այս երկու բնույթներից մեկը դառնում է տիրապետող»⁹: Գիտնականի բնորոշմամբ «հայ արվեստագետի յուրահատկությունը դրսևորվում է ոչ այնքան նոր ձևերի հայտնագործման, որքան դրանք ձևափոխելու և դեկորատիվ ցանկը յուրացնելու մեջ»¹⁰: Այս երկու հակիրճ բնորոշումներն իրենց ամբողջության մեջ պարունակում են հայ արվեստի առավել հետաքրքիր, երբեմն նույնիսկ շատ արվեստաբանների անհասկանալի թվացող կողմերի լուսաբանման փորձ: Լայնորեն ուսումնասիրելով արվեստների փոխադրեցությունների հարցը, Ս. Տեր-Ներսեսյանը իր աշխատանքի ճշգրիտ, նուրբ եղանակի շնորհիվ հայ մանրանկարչությունը երբեք չի հանգեցնում էկլեկտիզմի: Ընդհակառակը, այն դիտվում է որպես քրիստոնեական լայնարձակ աշխարհի մտայնության մի ուրույն դրսևորում իր բոլոր ազգային առանձնահատկություններով: Պատմա-համեմատական մեթոդի տեսակետից ուշագրավ է Ս. Տեր-Ներսեսյանի 1945 թ. լույս տեսած «Հայաստան և Բյուզանդիա» աշխատությունը¹¹: Հրապարակ բերելով և հանգամանորեն քննարկելով եվրոպացի ուսումնասիրողների տեսակետները, հեղինակն այստեղ հանգում է հետևյալ եզրակացության. «Բյուզանդիան և մանավանդ Անատոլիան կարող են ընդգրկվել այն երկրների շարքը, որոնք ուղղակի կամ անուղղակի իրենց ներդրումն ունեն արվեստի և ընդհանրապես հայ մշակույթի մեջ: Բայց հայկական ճարտարապետությունը բյուզանդական արվեստի սոսկ գավառական արտացոլումը չէ. այն նրանից տարբերվում է շատ հատկանիշներով, որոշ տիպեր, որոնք ստեղծվել ու հաջողությամբ են պահպանվել Հայաստանում, Բյուզանդական կայսրության լահմաններում նույնիսկ չեն փորձարկվել»¹²: Այսօր այս տեսակետը հանրահայտ է ու ապացուցման կարիք չունի: Բայց սրանից ավելի քան 30 տարի առաջ, երբ հայ ճարտարապետության ուսումնասիրության մակարդակը պատշաճ բարձրության վրա չէր, պետք էր արվեստների պատմության վերաբերյալ գիտելիքների շատ խոր ու լայն պաշար, ընդհանրացնելու մեծ ընդունակություն՝ նման համարձակ եզրակացության հանգելու համար:



⁹ Նույն տեղում, էջ 169:

¹⁰ Նույն տեղում, էջ 170:

¹¹ «Armenia and the Byzantine Empire», Cambridge, 1945.

¹² Նույն տեղում, էջ 61:

Հիշատակության արժանի են աշխարհի տարբեր թանգարաններում պահվող հայկական ձեռագրերի հավաքածուների՝ Ս. Տեր-Ներսեսյանի կազմած կատալոգները: Այսպես, 1958, 1963, 1973 թթ. հրատարակվեցին Դուբլինի¹³, Վաշինգտոնի¹⁴ և Բալթիմորի¹⁵ ձեռագրերի հավաքածուները:

Հատուկ ուշադրության է արժանի հմուտ գիտնականի 1965 թ. հրատարակված «Աղթամար» աշխատությունը: Այս գիրքը ոչ միայն արժեքավոր ներդրում է ողջ միջնադարյան արվեստի ուսումնասիրության մեջ, այլև «երկարատև ճիրնի մեջ գտնվող հին մշակույթի մի անտեսանելի վկայի գեղեցիկ վերակենդանացումն է»¹⁶: Այսօր մեզ շատ քիչ բան է հասել X դարի մոնումենտալ արվեստից: Այդ ժամանակաշրջանի բացառիկ վկաներից մեկը՝ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին օգնում է պատկերացում կազմելու եկեղեցիների ներքին և արտաքին հարդարանքի մասին: Որմնանկարների նմանօրինակ սխտեմ մեզ հայտնի է Արևմտյան Նվրոպայում XIII դարում և Բյուզանդիայում՝ պալեոլոգյան արվեստի տարածման ժամանակաշրջանում:

Ս. Տեր-Ներսեսյանը կարողանում է իր նյութը մատուցել և՛ խիստ գիտական, և՛ գիտա-մասսայական ձևերով: Ստեղծագործության ժանրի համեմատ փոխվում է և գիտնականի գրելաձևը, շարադրման եղանակը: Խիստ գիտական բնույթի աշխատություններում այս կամ այն հուշարձանի մանրամասների վերլուծությանը նվիրված են տասնյակ էջեր. գիտա-մասսայական գործերում այդ մանրամասները շրջանցվում են, գրելաձևը դառնում է պարզ, հանրամատչելի: Հեղինակը հետապնդում է մեկ հիմնական նպատակ՝ եվրոպական լայն հասարակայնության ուշադրությունը հրավիրել Հայաստանի, նրա մշակույթի վրա, պարզաբանել, թե ովքեր են հայերը, որտեղից են գալիս և ինչ են քերել համաշխարհային քաղաքակրթությանը: Հիշյալ կարգի աշխատությունների թվին են պատկանում 1972 թ. «Հին երկրներ և ժողովուրդներ» մատենաշարով հրատարակված «Հայեր» աշխատությունը¹⁷, եվրոպական տարբեր արվեստաբանական հանդեսներում հայ արվեստի մասին հրատարակված մի շարք հոդվածները:

Սիրարիի Տեր-Ներսեսյանը արժանացել է բազմաթիվ գիտական կոչումների: Նա ամերիկյան միջնադարյան ակադեմիայի անդամ է, Ֆրանսիայի հնագետների ազգային ընկերության թղթակից-անդամ, Հայաստանի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան իսկական անդամ: Լինելով արտակարգ համեստ և բարյացակամ, մեծ գիտնականը իրեն չի համարում անվիճելի հեղինակություն. ուշադիր ու հարգալից նույնիսկ երիտասարդ գործընկերների աշխատանքի նկատմամբ՝ նա միշտ պատրաստ է հաղորդակցվելու նրանց հետ իր գիտելիքներով, օգնելու, ճիշտ ուղղություն ցույց տալու նրանց: Սիրարիի Տեր-Ներսեսյանը չնայած բոլորեց իր 80 տարին, բայց լի է ստեղծագործական մեծ եռանդով: Լիափույս ենք, որ նրա մեծարժեք ստեղծագործությունների ցանկը կրագվի նոր ինքնատիպ ու մնայուն աշխատություններով:

Լ. ԶԱԲԱՐՅԱՆ

¹³ „The Chester Beatty Library“, Catalogue of the Armenian Manuscripts, with an Introduction on the History of Armenian Art, 2 vols., Dublin, 1958.

¹⁴ „Armenian Manuscripts in the Freer Gallery of Art“, Washington, 1963.

¹⁵ „Armenian Manuscripts in the Walters Art Gallery“, Baltimore, 1973.

¹⁶ „Aghtamar Church of the Holy Cross“, Cambridge, 1945, Foreword.

¹⁷ „The Arménians“, Thames and Hudson, 1969.